ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

1122-Ա/2 03 նոյեմբերի, 2016 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի արտահերթ նիստի 29.7/[376161]-16 N 41 արձանագրության 1-ին կետի 3-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14 կետի «դ» ենթակետը, ՀՀ կառավարության ծրագրում ներառված դրույթների իրականացման գործընթացը կազմակերպելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի գիտության ոլորտին վերաբերող դրույթների իրականացման 2017 թվականի միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2016 թվականի նոյեմբերի 3-ի
N- 1122-Ա/2 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/հ	Դրույթ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսական ապահովումը	Պատասխանատու	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից պատասխանատու
1.	1.4, 4), ա. 2017 թվականին գիտական աստիճանաշնորհման համակարգի արդիականացում՝ եվրոպական երկրների հետ համադրելի համակարգ ստեղծելու նպատակով	«Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	2017 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ	Գիտական կադրերի պատրաստման գիտականորեն հիմնավորված պետական պատվերի ձևավորում, միջազգային չափանիշներին համապատասխանող գիտական աստիճանաշնորհման համակարգի ներդրում	ՀՀ պետբյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության գիտական քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժին՝ պետ՝ Կարեն Ղարիբյան
2.	1.4, 4), բ. 2017 թվականին գիտահետազոտական կազմակերպությունների վարչական պաշտոններում աշխատանքային տարիքի սահմանափակում 70 տարեկանով	ՀՀ գիտական կազմակերպություններում վարչական պաշտոններում աշխատանքային տարիքը 70 տարեկանով սահմանափակելու մեխանիզմների մշակում և համապատասխան օրենսդրական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	2017 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ գիտական կազմակերպություններում վարչական պաշտոններ զբաղեցնողների նկատմամբ պաշտոնավարման ժամկետի համար տարիքային սահմանափակում կիրառելու մեխանիզմների առկայություն	ՀՀ պետբյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության գիտական տեղեկատվության և վերլուծության բաժին՝ պետ՝ Աիդա Խաչատրյան

3.	1.4, 4), գ. 2018 թվականից սկսած գիտության ֆինանսավորման ծավալների հիմնական մասի ուղղորդում դեպի կիրառական և փորձակոնստրուկտորական ծրագրեր	Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում հիմնարար և կիրառական/փորձակոնստրուկտորական նշանակության բաղադրիչների տարանջատման ու հիմնականում կիրառական/փորձակոնստրուկտորական ծրագրերի ֆինանսավորման, նպատակային ֆինանսավորման ծրագրերը բացարձակ մեծամասնությամբ կիրառականի վերափոխման, պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում տնտեսության մասնավոր հատվածի հետ իրականացվող հետազոտությունների մասնաբաժնի ավելացման մեխանիզմների մշակում և ներդրում ՀՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում	2017 թվականի օգոստոսի 1-ին տասնօրյակ	Կիրառական/փորձակոնստրուկտորական ծրագրերի տարանջատման և ֆինանսավորման առաջնայնության մեխանիզմների առկայություն	ՀՀ պետբյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության գիտության արդյունքի առևտրայնացման և ինովացիոն ծրագրերի բաժին՝ պետ՝ Արևիկ Խնկոյան